ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 հուլիսի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

98
(3307)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԱԴՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունում սպասվող կադրային փոփոխությունները չեն սահմանափակվելու միայն մեկ պաշտոնյայով:

Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը դժգոհ է նաեւ ՏԿԵ նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանի աշխատանքից, եւ քննարկվում է վերջինիս պաշտոնից ազատելու հարցը:

Արմեն Սիմոնյանը համակարգում է նախարարության առանցքային ուղղություններից մի քանիսը՝ տրանսպորտի, էներգետիկայի եւ ենթակառուցվածքների ոլորտները, սակայն, մեր տեղեկություններով, նրա աշխատանքը, կառավարության ղեկավարի գնահատմամբ, չի արդարացրել սպասումները:

Միաժամանակ, «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները հայտնում են, որ նախարար Դավիթ Խուդաթյանը, ինչպես նաեւ նախարարի մյուս տեղակալները, ամենայն հավանականությամբ, կվերանշանակվեն իրենց պաշտոններում եւ կշարունակեն պաշտոնավարել նոր ձեւավորվող կառավարությունում:

Այսպիսով, ՏԿԵ նախարարությունում սպասվող փոփոխությունները, ըստ ամենայնի, կրելու են ընտրովի բնույթ, եւ վարչապետը պատրաստվում է այս փուլում հրաժարվել այն պաշտոնյաներից, որոնց աշխատանքից դժգոհություններ ունի:



Ն որ գումարման Ազգային Ժողովում Գուրգեն Մելքոնյանը չի լինի: Խորհրդարանական ընտրությունների արդյունքներով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է 64 մանդատ, իսկ նա ՔՊ նախընտրական ցուցակում զբաղեցնում էր 149-րդ հորիզոնականը, ինչն ինքնաբերաբար բացառում է նրա մուտքը նոր խորհրդարան: Գուրգեն Մելքոնյանի պատգամավորական գործունեությունը լի էր բազմաթիվ աղմկահարույց միջադեպերով եւ էմոցիոնալ գնահատականներով, որոնք մշտապես հայտնվում էին մամուլի ուշադրության կենտրոնում: ԱԺ ՔՊ-ական պատգամավոր, «նախկիններից ավելի նախկին» Գագիկ (Գուրգեն) Մելքոնյանը NEWS.am-ի հետ զրույցում Տավուշում 4 գյուղերի տարածքները Ադրբեջանին հանձնելու մասին հայտարարել էր՝ Նիկոլ Փաշինյանը հանձնող չի, իր հանձնելով չի: Եւ հավելել էր. «Այդ գյուղերը ադրբեջանական գյուղեր են, ինչքա՞ն պետք է ասես, որ մարդու ուղեղը մտնի: Դա ադրբեջանական տարածք է: Ասում են՝ Փաշինյանը Տավուշի գյուղերը հանձնում է: Բայց դրանք Տավուշի գյուղերը չեն»: Հիշեցնենք, որ պատգամավորի որդին եւս հայտնվեց սկանդալի կենտրոնում եւ հեռացվեց պաշտոնից: Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի հրամանով «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի պետ Արման Մելքոնյանն ազատվեց զբաղեցրած պաշտոնից:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



Ա Ժ նախկին պատգամավոր, Էրեբունի վարչական շրջանի նախկին ղեկավար Միեր Սեդրակյանի՝ հանրությանը հայտնի «Թոխմախի Միերի» դեմ հարուցված քրեական գործը, որը շուրջ հինգ տարի քննվում է դատարանում, կրկին ընթացքի մեջ է: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ գործի քննությունը կասեցված էր, քանի որ 2024 թվականին դատարանի որոշմամբ նշանակվել էր դատաշինարարատեխնիկական փորձաքննություն: Այժմ փորձաքննության եզրակացությունն արդեն ստացվել է, ինչից հետո դատարանը վերաբացել է գործի քննությունը: Հիշեցնենք, որ քրեական գործը 2021 թվականի հունվարի 13-ից գտնվում է Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում: Չորս տարի տեւած դատաքննությունից հետո՝ 2024 թվականի հոկտեմբերի 31-ի դատական նիստում, դատարանը որոշել էր նշանակել դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, ինչի հետեւանքով գործի քննությունը փաստացի կասեցվել էր մինչեւ եզրակացության ստացումը: Ըստ մեղադրանքի՝ Միեր Սեդրակյանը, 1999-2008 թվականներին զբաղեցնելով Երեւանի Էրեբունի համայնքի ղեկավարի պաշտոնը, «շահադիտական եւ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, 2004 թվականի ընթացքում համայնքի ավագանու անդամների օժանդակությամբ չարաշահել է իր պաշտոնեական լիազորությունները, պաշտոնեական դիրքն օգտագործել ծառայության եւ Էրեբունի համայնքի շահերին հակառակ, ինչի հետեւանքով համայնքի իրավունքներին եւ օրինական շահերին պատճառվել է էական վնաս, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ»:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժ ողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկություններով՝ Ազգային Ժողովի աշխատակազմի ղեկավարի պաշտոնում նախատեսվում է նշանակել Դավիթ Համբարյանին: Ո՞վ է նա: Համբարյանն ունի պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, կրթության եւ մասնավոր հատվածում կառավարման փորձ: Նրա աշխատանքային ուղին սկսվել է դեռ 2002 թվականին՝ ՀՀ նախագահի աշխատակազմի արարողակարգի բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ: Այնուհետեւ՝ 2004-2007 թվականներին, աշխատել է նախագահի աշխատակազմի արտաքին կապերի վարչությունում՝ որպես առաջատար մասնագետ: 2005-2011 թվականներին դասավանդել է Երեւանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: 2008-2009 թվականներին զբաղեցրել է «Հայփոստ» ընկերության հասարակայնության հետ կապերի եւ հաղորդակցության ծառայության պետի պաշտոնը, իսկ 2009-2016 թվականներին աշխատել է «Օրանժ Արմենիա» ընկերությունում՝ սկզբում որպես խորհրդատու, ապա՝ գովազդի, մարքեթինգի ռազմավարության եւ պլանավորման թիմի ղեկավար: 2015-2016 թվականներին ղեկավարել է «Օրանժ Արմենիա»-ի եւ «Յուքոմ»-ի միավորման գործընթացը, իսկ 2016-2017 թվականներին ղեկավարել է «Յուքոմ»-ի մարքեթինգային եւ հաղորդակցության գործընթացները: 2017-2020 թվականներին եղել է «Դասավանդիր Հայաստան» կրթական հիմնադրամի հավաքագրման եւ ընտրության գծով տնօրեն:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՍԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃՆՇՄԱՆ ԳՈՐԾԻՔ Է»

ArmLur.am-ի զրուցակիցը քաղաքագետ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախընտրական ցուցակով պատգամավորության թեկնածություն առաջադրած Ստեփան Դանիելյանն է:

- Պարոն Դանիելյան, ինչպե՞ս եք գնահատում Գագիկ Ծառուկյանի շուրջ տեղի ունեցող զարգացումները: Արդյո՞ք դրանք կարելի է կապել Նիկոլ Փաշինյանի նախընտրական այն հայտարարությունների հետ, որոնցում նա նշում էր, որ Ռոբերտ Քոչարյանը, Գագիկ Ծառուկյանը, Սամվել Կարապետյանը, Սերժ Սարգսյանը եւ մյուսները պատասխան են տալու իրենց գործողությունների համար:

- Ես կարծում եմ՝ խնդիրը պետք է դիտարկել ավելի լայն համատեքստում: Իմ կարծիքով՝ Հայաստանում փորձ է արվում խոշոր կապիտալը հեռացնել քաղաքականությունից: Վարչապետն ինքը ժամանակին արտահայտել էր այն միտքը, որ մեծ կարողություն ունեցող մարդիկ չպետք է զբաղվեն քաղաքականությամբ: Նույն գաղափարը տեղ էր գտել նաեւ իշխանամետ մամուլում, որտեղ նշվում էր, որ հարուստ գործարարները պետք է զբաղվեն իրենց բիզնեսով, այլ ոչ թե քաղաքականությամբ:

Այս տրամաբանության համաձայն՝ եթե որեւէ խոշոր գործարար մտնում է քաղաքականություն, ապա նա հայտնվում է թիրախում: Ընդդիմությունը, ըստ էության, պետք է զրկվի ֆինանսական ռեսուրսներից, որպեսզի չկարողանա կազմակերպել իր քաղաքական գործունեությունը: Այդ համատեքստում եմ դիտարկում նաեւ Գագիկ Ծառուկյանի եւ Սամվել Կարապետյանի նկատմամբ իրականացվող գործընթացները: Տարբերությունն այն է, որ Սամվել Կարապետյանի ֆինանսական միջոցների զգալի մասը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, մինչդեռ Հայաստանում գործող նրա ակտիվների նկատմամբ եւս ճնշումներ են իրականացվում:

- Միաժամանակ պետականացվեց նաեւ «Արարատցեմենտը», որը, ինչպես հայտարարել է էկոնոմիկայի նախարար Գ-եւորգ Պապոյանը, գործելու է էկոնոմիկայի նախարարության կառավարման ներքո: Արդյո՞ք սա նույնպես քաղաքական ճնշման դրսեւորում է:

- Իմ գնահատմամբ՝ այո: Սա քաղաքական ճնշման գործիք է եւ միաժամանակ ուղերձ այն գործարարներին, որոնք ունեն լուրջ ֆինանսական հնարավորություններ, որպեսզի նրանք չմտնեն քաղաքականություն:

Սակայն այստեղ առաջանում են մի շարք լուրջ խնդիրներ: Նախ՝ վտանգվում է սեփականության անձեռնմխելիության սկզբունքը, որն ամրագրված է Սահմանադրությամբ: Եթե ներդրողները տեսնում են, որ սեփականության իրավունքը պաշտպանված չէ, ապա բնականաբար ներդրումներ չեն իրականացնի:

Բացի այդ, նույնիսկ եթե պետությունը հայտարարում է, որ որեւէ գույք պետականացվել է, ապագայում դրա վաճառքը նույնպես խնդիր է դառնալու, քանի որ ցանկացած հավանական գնորդ կհասկանա, որ նույն իրավիճակը կարող է կրկնվել նաեւ իր նկատմամբ:

Այս ամենը, իմ կարծիքով, երկարաժամկետ հեռանկարում կարող է լուրջ վնաս հասցնել Հայաստանի տնտեսությանը, նվազեցնել ներդրումների հոսքը եւ բացասաբար անդրադառնալ երկրի տնտեսական զարգացման վրա: Վերջի-վերջո, դրա հետեւանքները զգալու է նաեւ իշխանության հիմնական ընտրազանգվածը:

Մյուս կարեւոր հետեւանքն այն է, որ եթե ընդդիմությունը զրկվում է ֆինանսական հնարավորություններից, ապա քաղաքական դաշտը թուլանում է: Արդյունքում կարող են ի հայտ գալ անկառավարելի ուժեր, որոնք չունեն հստակ քաղաքական գաղափարախոսություն եւ առաջնորդվում են բացառապես վրեժխնդրության տրամաբանությամբ: Դա կարող է հանգեցնել քաղաքական համակարգի ապակայունացման, ինչը որեւէ պատասխանատու իշխանություն չպետք է ցանկանա:

- Վերջում անդրադառնանք նոր ձեւավորվող խորհրդարանական ընդդիմությանը: Նրանք պատրաստվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովից ստանալ իրենց պատգամավորական մանդատները՝ չնայած այն հայտարարություններին, որ ընտրությունների ընթացքում, իրենց գնահատմամբ, ավելի քան 60 հազար ձայն է կեղծվել: Ի՞նչ կարող էին նրանք անել, ինչը, ձեր կարծիքով, չարեցին:

- Կարծում եմ՝ հարցն այս ձեւակերպմամբ այնքան էլ ճիշտ չէ: Եթե այդ քաղաքական ուժերի ներկայացուցիչները հայտարարում են, որ ունեն գործողությունների հստակ ծրագիր, սակայն այս պահին չեն ցանկանում հրապարակել այն, ապա դժվար է գնահատական տալ: Եթե ընդունենք, որ նրանք իսկապես ունեն նման ծրագիր, ապա այս փուլում ճիշտ չէ կանխատեսումներ անել կամ գնահատել նրանց գործողությունները: Հետեւաբար, կարծում եմ՝ այս հարցը պետք է ուղղել հենց այն քաղաքական ուժերին, որոնք պատրաստվում են ստանալ իրենց մանդատները, այլ ոչ թե ինձ կամ իմ նման դիրքորոշում ունեցող մարդկանց:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԳԱՆԳԱՏ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

Ռուբեն Վարդանյանի գործով գանգատ է ներկայացվել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Այս մասին հայտնում են «Ռուբեն Վարդանյան» հիմնադրամից:

«Ս. թ. հուլիսի 19-ին իմ կողմից պաշտոնական գանգատ է ներկայացվել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ) ՝ՀՀ քաղաքացի, ներկայումս Ադրբեջանի Ումբակի քրեակատարողական համալիրում պահվող Ռուբեն Վարդանյանի գործի վերաբերյալ:ի շահերի պաշտպանությամբ:

Գանգատում մանրամասնորեն նկարագրված են Մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (Կոնվենցիա) ութ հոդվածների խախտումները եւ բերված են դրանք հաստատող հիմնավորումներ:

Ռուբեն Վարդանյանի գործով ականի փետրվարի 17-ին՝ նրան դատապարտելով 20 տարվա ազատազրկման: Դատարանը դատավճիռն ամբողջությամբ չէր ընթերցել:

Ավելի ուշ, ընտանիքի միջոցով հասանելի դարձած դատավճռից պարզ է դարձել, որ Վարդանյանը «մեղավոր» է ճանաչվել 41 դրվագով՝Ադրբեջանի Հանրապետության քրեական օրենսգրքի 21 հոդվածների հիման վրա:

Դատավճռում Վարդանյանի անհատական մեղքը չի հիմնավորվել փաստերով կամ ապացույցներով: Փոխարենը դատարանը եզրակացրել է, որ «հանցավոր համայնքը»՝ Արցախի չճանաչված վարչակազմը, Լեռնային Ղարաբաղում գործել է 1988 թվականից, եւ որ Վարդանյանը միացել է այդ «համայնքին» 2020 թվականի դեկտեմբերին, թեեւ այդ ժամանակ նա բնակվում էր Մոսկվայում:

Վարդանյանի կողմից քաղաքացիական վարչական պաշտոնի ընդունումը դատարանը գնահատել է որպես իշխանության բռնի զավթում, նրա առեւտրային եւ բարեգործական գործունեությունը՝ որպես ապօրինի ձեռնարկատիրություն եւ ահաբեկչության ֆինանսավորում, իսկ Լաչինի միջանցքով Լեռնային Ղարաբաղ մուտք գործելը՝ որպես Ադրբեջանի պետական սահմանն ապօրինի հատել:

Վարդանյանը չի բողոքարկել դատավճիռը, քանի որ համարել է, որ դատավարությունը եղել է բեմադրված եւ կանխորոշված, իսկ ներպետական բոլոր միջոցները՝ անարդյունավետ:

Իրականում անկարելի է պաշտպանել իրավունքները մի համակարգում, որն ի սկզբանե մերժում է արդար դատաքննության իրավունքը: Ուստի Ռուբեն Վարդանյանը որոշում է կայացրելը պայքարը շարունակել միջազգային իրավական մեխանիզմների միջոցով:

Սիրանուշ Սահակյան, փաստաբան, «Միջազգային եւ համեմատական իրավունքի կենտրոնի» ղեկավար, ՄԻԵԴ-ում հայ գերիների շահերի ներկայացուցիչ»:

ՈՎՔԵՐ ՄԱՆԴԱՏ ՍՏԱՑԱՆ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից Ազգային Ժողովի պատգամավոր է գրանցել եւ մանդատ տրամադրել 29 թեկնածուի: ԿԸՀ-ն համապատասխան արձանագրությունն ընդունել է հուլիսի 21-ի նիստում՝ 2026 թվականի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքների հիման վրա:

Մանդատներ են ստացել՝
Արման Ավչյանը,
Նարեկ Կարապետյանը,
Արամ Վարդեւանյանը,
Դավիթ Ղազինյանը,
Ռուբեն Մխիթարյանը,
Արեգա Հովսեփյանը,
Մամիկոն Ասլանյանը,
Մարիաննա Ղահրամանյանը,
Հայկ Սուքիասյանը,
Արգիշտի Դարբինյանը,
Իրինա Յոլյանը,
Էդգար Ղազարյանը,
Տիգրան Աբրահամյանը,
Լենա Մաթեւոսյանը,
Անդրանիկ Գեւորգյանը,
Հայկ Ֆարմանյանը,
Գրիշա Թամրազյանը,
Լիանա Գասպարյանը,
Վաղինակ Վարդանովը,
Գառնիկ Դավթյանը,
Լիանա Մանուկյանը,
Հարություն Մնացականյանը,
Վրույր Այվազյանը,
Սյուզաննա Ավետիսյանը,
Հարություն Հարությունյանը,
Շիրազ Մանուկյանը,
Անուշ Միրզոյանը,
Անուշավան Մանուչարյանը,
Հասմիկ Ենգոյանը:

9-րդ գումարման Ազգային Ժողովում «Հայաստան» դաշինքը ներկայացված կլինի հետեւյալ պատգամավորներով՝
Սաղաթելյան Իշխան Վաչիկի,
Գրիգորյան Աննա Արամի,
Խաչատրյան Սեւակ Սասունի,
Խաչատրյան Արթուր Լեւոնի,
Վարդանյան Քրիստինե Մարտինի,
Վարդանյան Աղվան Արշավիրի,
Մանուկյան Գեղամ Ազատի,
Խամոյան Ագնեսա Պողոսի,
Քոչարյան Լեւոն Ռոբերտի,
Սարգսյան Արթուր Լավրենտի,
Գալստյան Լիլիթ Սերյոժայի,
Մանուկյան Մեսրոպ Գեւորգի:

ՀԵՌԱՆՈՒՄ ԵՆ ԱԺ-ԻՑ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ԱԺ նախագահի թեկնածու Ռուբեն Ռուբինյանը շարունակում է Ազգային Ժողովի նախագահի աշխատակազմից ազատել Ալեն Սիմոյանի կադրերին:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Ազգային Ժողովում օգոստոսի 3-ից կդադարեն աշխատել Ազգային Ժողովի նախագահի օգնականներ Կարլեն Գրեյանը եւ Զինա Չալիկյանը, Ազգային Ժողովի նախագահի խորհրդականներ Հովհաննես Նալբանդյանը եւ Ահարոն Ներսիսյանը:

Հիշեցնենք, որ Ռուբինյանը աշխատանքից ազատել էր նաեւ Ազգային Ժողովի նախագահի ռեֆերենտ Էդգար Մուրադյանին:

ԱԺ 9-րդ գումարման նստաշրջանի առաջին նիստը կկայանա օգոստոսի 2-ին:

Ս. Գ.

ՔՊ-Ի ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին մասից պատգամավորական մանդատ են ստանում՝

Ռուբեն Կարապետի Ռուբինյանը,
Վահագն Հովիկի Ալեքսանյանը,
Ալխաս Աղաբեկի Ղազարյանը,
Արայիկ Էդուարդի Հարությունյանը,
Հայկ Արսենի Կոնջորյանը,
Արուսյակ Թովմասի Ջուլհակյանը,
Հասմիկ Արմենի Հակոբյանը,
Արմեն Էդմոնդի Խաչատրյանը,
Արուսյակ Լեւոնի Մանավազյանը,
Արթուր Ղարիբի Հովհաննիսյանը,
Վիլեն Կարենի Գաբրիելյանը,
Սոնա Արայի Ղազարյանը,
Արման Աշոտի Եղոյանը,
Ջարուհի Վալերիանի Բաթոյանը,
Սասուն Մեխակի Միքայելյանը,
Սիսակ Արմենի Գաբրիելյանը,
Նազելի Հրաչի Բաղդասարյանը,
Բաբկեն Էդիկի Թունյանը,
Տաթեւիկ Մաթեւոսի Գասպարյանը,
Լեւոն Գագիկի Լեւոնյանը,
Արաքսյա Պողոսի Վարդանյանը,
Քնարիկ Համլետի Հարությունյանը,
Նարեկ Հարազատի Գրիգորյանը,
Արփինե Հրահատի Դավոյանը,
Հակոբ Կարապետի Սիմիդյանը,
Գարիկ Մնացականի Սարգսյանը,
Վահե Վոլոդյայի Ղալումյանը,
Լուսինե Խաչիկի Բաղալյանը,
Սարիկ Սամվելի Մինասյանը,
Սերգեյ Պապաշի Բագրատյանը,
Լիլիթ Համբարձումի Մինասյանը,
Սարգիս Հայկի Խանդանյանը,
Մարիամ Աշոտի Պողոսյանը,
Միքայել Արմենի Խաչատրյանը,
Ծովինար Գեւորգի Վարդանյանը,
Տրդատ Նորիկի Սարգսյանը,
Նատալիա Արամի Սինորյանը,
Լյուդվիկ Արիստակեսի Գյուլնազարյանը,
Թագուհի Արարատի Ղազարյանը,
Անդրանիկ Գրիգորի Քոչարյանը,
Սուրեն Մկրտչի Հովհաննիսյանը,
Լիլիթ Սասունի Ստեփանյանը,
Վլադիմիր Գագիկի Խաչատրյանը,
Սյուզաննա Վարդգեսի Սարգսյանը,
Նարեկ Սամվելի Ղահրամանյանը,
Ռուզաննա Գրիգորի Երեմյանը,
Կարեն Հովհաննեսի Համբարձումյանը,
Տարոն Արթուրի Չախոյանը,
Մարիա Էդվարդի Կարապետյանը,
Նարեկ Աբրահամի Բաբայանը,
Նելլի Էդիկի Բավեյանը,
Ահարոն Մամիկոնի Սահակյանը,
Վոլոդյա Գառնիկի Հակոբյանը,
Նոնա Գագիկի Հովհաննիսյանը,
Արամ Մայիսի Խաչատրյանը,
Հռիփսիմե Աշոտի Գրիգորյանը,
Գոռ Մնացականի Արշակյանը,
Տիգրան Վանուշի Գալստյանը,
Լուսինե Հրահատի Ավետիսյանը,
Ռոման Վարազդատի Համբարձումյանը,
Էդուարդ Արթուրի Աղաջանյանը:

Ընտրական ցուցակի երկրորդ մասից պատգամավորական մանդատ են ստանում՝

Ռուստամ Ջուրբայի Բաքոյանը,
Ալեքսեյ Իվանի Սանդիկովը,
Կնյազ Թամիդի Հասանովը:

ԲԱՔՎՈՒՄ

ԳԱՂՏՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱՌԱՆՑ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հայտարարել է, որ հուլիսի կեսերին Բաքվում միաժամանակ գտնվել են նախկին ռուս եւ գերմանացի բարձրաստիճան պաշտոնյաներ, եւ հնարավոր է՝ նրանք հանդիպում են ունեցել՝ քննարկելու Ուկրաինայում շարունակվող պատերազմը:

Ալիեւը այս մասին ասել է Բեռլինում՝ Գերմանիայի կանցլեր Ֆրիդրիխ Մերցի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ՝ նշելով, որ Ադրբեջանի իշխանությունները նախապես տեղեկացված չեն եղել այդ հանդիպման մասին:

«Թռիչքների վիճակագրությունը հիմք է տալիս ենթադրելու, որ նման գաղտնի հանդիպում է տեղի ունեցել Բաքվում, սակայն մենք այդ մասին որեւէ ծանուցում չենք ստացել ո՛չ Գերմանիայից, ո՛չ Ռուսաստանից»,- ասել է Ալիեւը:

Նրա խոսքով՝ Ադրբեջանի տարածքն օգտագործվել է առանց երկրի իշխանություններին տեղեկացնելու:

«Եթե այս հանդիպումը նպաստում է ուկրաինական-ռուսական պատերազմի ավարտին, մենք, իհարկե, ողջունում ենք դա»,- նշել է Ադրբեջանի նախագահը:

Ալիեւը հայտնել է, որ լրատվական հրապարակումներից հետո հանձնարարել է Ադրբեջանի պետական սահմանային ծառայությանը հետաքննություն անցկացնել, որի արդյունքում տեղեկությունը հաստատվել է:

Նրա խոսքով՝ հուլիսի 12-ին Բաքու են ժամանել նախկին գերմանացի պաշտոնյաներ Ռոնալդ Պոֆալան եւ Մաթիաս Պլատցեկը, որոնք Բեռլինից թռիչքով ժամանել են Ադրբեջան եւ հուլիսի 14-ին վերադարձել Գերմանիա:

Ռոնալդ Պոֆալան 2009-2013 թվականներին զբաղեցրել է Գերմանիայի կանցլերի աշխատակազմի ղեկավարի եւ հատուկ հարցերով նախարարի պաշտոնները Անգելա Մերկելի կառավարությունում: Ավելի ուշ նա ղեկավարել է գերմանա-ռուսական հարաբերությունների շուրջ գործող «Պետերբուրգյան երկխոսություն» ձեւաչափը:

Մաթիաս Պլատցեկը եղել է Բրանդենբուրգի նախկին վարչապետը եւ երկար տարիներ կապված է եղել Գերմանիա-Ռուսաստան հարաբերությունների զարգացման կողմնակիցների շրջանակների հետ: Ալիեւի խոսքով՝ նույն օրը՝ հուլիսի 12-ին, Բաքու են ժամանել նաեւ Ռուսաստանի նախկին վարչապետ Վիկտոր Զուբկովը եւ Ռուսաստանի նախագահի քաղաքացիական հասարակության եւ մարդու իրավունքների խորհրդի ղեկավար Վալերի Ֆադեեւը:

Զուբկովը 2007-2008 թվականներին եղել է Ռուսաստանի վարչապետը, իսկ ներկայումս ղեկավարում է «Գազպրոմ» ընկերության տնօրենների խորհուրդը: Ֆադեեւը 2019 թվականից ղեկավարում է Ռուսաստանի նախագահի խորհրդատվական մարմինը՝ Քաղաքացիական հասարակության եւ մարդու իրավունքների խորհուրդը:

Գերմանիայի կանցլեր Ֆրիդրիխ Մերցը հայտարարել է, որ տեղեկություն չունի Բաքվում հնարավոր հանդիպման մասին, սակայն նշել է, որ վերջին ամիսներին Գերմանիան փորձում է համոզել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին սկսել բանակցություններ:

«Այս պատերազմի ավարտը կախված է միայն Ռուսաստանի կառավարությունից եւ Ռուսաստանի նախագահից: Բանակցություններ սկսելու որոշումը միայն նրանից է կախված»,- ասել է Մերցը՝ հավելելով, որ Պուտինը շարունակում է հրաժարվել դրանից:

Ալիեւը կրկին հայտարարել է, որ պատերազմը պետք է անհապաղ դադարեցվի:

«Մեր հիմնական նպատակը այս պատերազմի ավարտն է եւ տարածաշրջանում խաղաղության ապահովումը»,- ասել է Ադրբեջանի նախագահը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐ ՀԱՐՎԱԾՆԵՐ Է ՀԱՍՑՐԵԼ

Ուկրաինական ուժերը հուլիսի 22-ի գիշերը հարվածներ են հասցրել Wildberries-ի լոգիստիկ կենտրոններին Կրասնոդարի եւ Ստավրոպոլի երկրամասերում:

«Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հայտնել է Wildberries-ի ղեկավար Տատյանա Կիմը Telegram-ում: Նա նշել է, որ հարվածի են ենթարկվել լոգիստիկ կենտրոնները Կրասնոդար եւ Նեւինոմիսկ քաղաքներում, կան վիրավորներ: Ընկերությունից հայտնել են, որ երկու կենտրոնների աշխատանքը դադարեցվել է:

Իր հերթին, Ստավրոպոլի երկրամասի նահանգապետ Վլադիմիր Վլադիմիրովը հայտնել է, որ Նեւինոմիսկի պահեստային համալիրում հրդեհ է բռնկվել, որի հետեւանքով հինգ մարդ վիրավորվել է. նրանցից երեքի վիճակը ծանր է: Իսկ Կրասնոդարի պահեստային համալիրում, ըստ իշխանությունների, վիրավորվել է 10 մարդ:

Հուլիսի 18-ի գիշերը եւս Տամբովի մարզի Կոտովսկում եւ Մոսկվայի մարզի Էլեկտրոստալում Wildberries-ի պահեստները ենթարկվել էին անօդաչու թռչող սարքերի հարձակման: Կոտովսկում զոհվել է յոթ մարդ, Էլեկտրոստալում՝ մեկ:

Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին հաստատել է Կրասնոդարի եւ Ստավրոպոլի երկրամասերին հարվածները: Telegram-ում գրառման մեջ նա նշել է, որ երկրի Զինված ուժերը հաջողությամբ հարվածել է «լոգիստիկ կենտրոններին, որոնք ներգրավված են ռուսական բանակին անօդաչու թռչող սարքերի բաղադրիչներով, նավիգացիոն սարքերով եւ սարքավորումներով մատակարարելու մեջ»:

Զելենսկին նաեւ հայտնել է, որ ուկրաինական ուժերը խոցել են «հերթական նավթաբազան», ինչպես նաեւ ռուսական ստվերային նավատորմի մեկ լցանավ եւ չորս չորաբեռնատար նավ:

Ըստ Կրասնոդարի երկրամասի նահանգապետ Վենիամին Կոնդրատեւի՝ Արմավիր քաղաքում նավթաբազային հարվածի հետեւանքով մեկ մարդ է զոհվել:

ՌԴ պաշտպանության նախարարությունը հայտարարել է, որ երկրի 16 տարածաշրջանում խոցվել է ուկրաինական 242 անօդաչու թռչող սարք:

Ուկրաինան էլ հայտնել է, որ Ռուսաստանը երկրի ուղղությամբ արձակել է 1 բալիստիկ հրթիռ, երեք կառավարվող ավիացիոն հրթիռ եւ 216 ԱԹՍ: Օդեսայի մարզում կա 1 զոհ: Կիեւի մարզում 5 մարդ է վիրավորվել, այդ թվում՝ 1 երեխա:

ՀԱՍՏԱՏԵԼ Է ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հաստատել է Սաուդյան Արաբիայի հետ միջուկային համաձայնագիր, որը կարող է թագավորությանը հնարավորություն տալ ուրանի հարստացման կարողություններ ձեռք բերել քաղաքացիական միջուկային ծրագրի շրջանակում:

Սպասվում է, որ համաձայնագիրը պաշտոնապես կհայտարարվի առաջիկայում: Այն նախատեսված է 30 տարվա համար եւ ենթադրում է ամերիկյան ընկերությունների մասնակցությունը Սաուդյան Արաբիայի միջուկային ծրագրի զարգացմանը:

Համաձայնագիրը կարող է նախատեսել նաեւ Սաուդյան Արաբիայում ուրանի հարստացման գործարանի կառուցում, սակայն այն դեռ պետք է ներկայացվի ԱՄՆ Կոնգրեսի քննարկմանը: Որոշ օրենսդիրներ մտահոգություն են հայտնում, որ նման քայլը կարող է մեծացնել միջուկային զենքի տարածման վտանգը:

Փորձագետները զգուշացնում են, որ ուրանի հարստացման սեփական հնարավորությունը կարող է հետագայում նպաստել միջուկային ռազմական ծրագրի ստեղծմանը: Սաուդյան Արաբիայի թագաժառանգ Մուհամեդ բին Սալմանը նախկինում հայտարարել էր, որ եթե Իրանը ձեռք բերի միջուկային զենք, Ռիադը եւս կարող է նման քայլ դիտարկել:

Համաձայնագրի հնարավոր հայտարարությունը տեղի է ունենում ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից Իրանի դեմ իրականացվող ռազմական գործողությունների ֆոնին, որոնց նպատակներից մեկը Թեհրանի միջուկային հնարավորությունների սահմանափակումն է:

Սաուդյան Արաբիան Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անդամ է, սակայն, ըստ աղբյուրների, նոր համաձայնագիրը չի ներառի լրացուցիչ վերահսկողության մեխանիզմներ նախատեսող ՄԱԳԱՏԷ-ի լրացուցիչ արձանագրությունը:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

30-ԻՑ ԱՎԵԼԻ

ԻՆՉՊԵՍ Է ԿՐԱԿՈՑՆԵՐ ԱՐՁԱԿՈՒՄ

ArmLur.am-ի ձեռքի տակ է հայտնվել բացառիկ տեսանյութը Երեւանում տեղի ունեցած աղմկահարույց հրաձգության վայրից, որտեղ Էրեբունու բնակելի շենքերի բակում, մարդկանց ներկայությամբ, արձակվել է 30-ից ավելի կրակոց:

Տեսանյութում երեւում է, թե ինչպես է սպիտակ ավտոմեքենայով ժամանած անձը կրակ բացում, իսկ կրակոցների ձայնից խուճապահար քաղաքացիները փորձում են փրկվել: Կադրերում երեւում է նաեւ մի կին, որը գնումների տոպրակները ձեռքին փորձում է փախչել վտանգավոր տարածքից:

Հիշեցնենք, որ ՀՀ ՆԳՆ պաշտոնական տեղեկության համաձայն՝ հուլիսի 18-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունում եւ Երեւանի քրեական վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Երեւանի Մուրացանի 109 հասցեում տեղի է ունեցել հրաձգություն, որի հետեւանքով կա զոհ: Դեպքի վայրից մարմնական վնասվածքներով հիվանդանոց է տեղափոխվել նաեւ 15-ամյա Գ. Մարգարյանը: ArmLur.am-ը պարզել է, որ նրա վիրավորումը պատահականության հետեւանք չէ, եւ նա եւս առնչություն ունի տեղի ունեցած միջադեպի հետ:

ArmLur.am-ի տեղեկություններով՝սպանվածը Երեւանի Բելինսկու փողոցի բնակիչ, 20-ամյա Վահե Մկրտչյանն է:

Դեպքի վայրում արձանագրվել է նաեւ մեկ այլ ուշագրավ հանգամանք. այնտեղ հայտնաբերվել է չպայթած նռնակ, ինչի պատճառով տարածք է ժամանել սակրավորների խումբ՝ այն վնասազերծելու նպատակով:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ քրեական վարույթի շրջանակում արդեն 4 անձի մեղադրանք է առաջադրվել, եւ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կընտրվի կալանքը:

Իրավապահները չեն բացառում, որ գործն ունեցել է կազմակերպիչներ, որոնց ինքնությունը դեռեւս չի հրապարակվում: Ըստ նախնական տեղեկությունների՝ դեպքը կարող է առնչություն ունենալ բնակելի հատվածում գործող խաղատան հետ, որը միջադեպից հետո փակվել է: Նույն աղբյուրների համաձայն՝ անձը, որի նկատմամբ, ըստ ամենայնի, ուղղված է եղել հարձակումը, դեպքի վայրից հեռացել էր կրակոցներից մոտ 10-15 րոպե առաջ, եւ արձակված պարկուճները իրենց նպատակին չեն ծառայել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԳՈՐԾԸ ՄՏԱՎ ԴԱՏԱՐԱՆ

Դատախազը 2026 թվականի հուլիսի 21-ին, հաստատված մեղադրական եզրակացությամբ, Հակակոռուպցիոն դատարան է հանձնել «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի պատգամավորի թեկնածու Դ.Ղ.-ի վերաբերյալ քրեական վարույթի նյութերը:

Հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով պարզվել է, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի պատգամավորի թեկնածու Դ.Ղ.-ն, նույն դաշինքի Երեւանի Վ. Փափազյան փողոցի 29 շենքի 73 հասցեում գործող գրասենյակի աշխատանքը փաստացի համակարգող Ա.Մ.-ի, դաշինքի համակիր Ա.Ս.-ի եւ այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ նախապատրաստվել է ընտրակաշառք տալ ընտրողներին՝ Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին նշանակված հերթական ընտրություններին «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի օգտին քվեարկելու պայմանով:

Հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով Դ.Ղ.-ն Ա.Ս.-ին է փոխանցել 1 միլիոն 400 հազար դրամ՝ ընտրակաշառք տալու համար օգտագործելու նպատակով, սակայն հանցակիցների միջեւ ընտրակաշառքի գումարը բաշխելու եւ ընտրողներին փոխանցելու եղանակների շուրջ առաջացած տարաձայնությունների պատճառով ծրագրված հանցագործությունը Դ.Ղ.-ի կամքից անկախ հանգամանքներով ավարտին չի հասցվել, իսկ գումարը հետագայում փոխանցվել է Ա.Մ.-ին:

Նույն քրեական վարույթով հանրային քրեական հետապնդումներ են հարուցվել նաեւ Ա.Մ.-ի, Ա.Ս.-ի, Լ.Ս.-ի, Ս.Հ.-ի, Գ.Հ.-ի, Հ.Գ.-ի եւ Պ.Ջ.-ի նկատմամբ՝ ընտրակաշառք տալու, ընտրակաշառք տալու նախապատրաստության եւ ընտրակաշառք ստանալու համար:

2026թ. հուլիսի 21-ին քրեական վարույթի նյութերը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ, հանձնվել են Հակակոռուպցիոն դատարան:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր, որ Հակակոռուպցիոն կոմիտեն առաջիկայում նախաքննության ավարտ կհայտարարի «Ուժեղ Հայաստան» դաշինքի պատգամավորի թեկնածու Դավիթ Ղազինյանի դեմ հարուցված քրեական գործով: Դավիթ Ղազինյանը այս պահին ԱԱԾ մեկուսարանում է:

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ ԶԲՈՍԱՇՐՋԻԿԻՆ

Հուլիսի 21-ին՝ ժամը 07:37-ին, Գեղարքունիքի մարզային օպերատիվ կառավարման կենտրոն տեղեկություն է ստացվել, որ «Կարմիր Սար» կոչվող հատվածում՝ օտարերկրացի զբոսաշրջիկին անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր են մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչությունների հրշեջ-փրկարարական ջոկատներից օպերատիվ խումբ եւ մեկ մարտական հաշվարկ:

Փրկարարները հայտնաբերել են նրան, ցույց տվել համապատասխան օգնություն եւ ուղեկցել Գավառ:

ԼՈՒՐԵՐ

ԿԱՋԱՏՎԵ՞Ն ՊԱՇՏՈՆԻՑ

Էրեբունի վարչական շրջանում հնչած կրակոցների հետեւանքով, չի բացառվում, պաշտոնից ազատվեն Էրեբունի վարչական շրջանի ոստիկանապետ Արմեն Հարությունյանը եւ Կոտայքի մարզի ոստիկանապետ Տիգրան Պողոսյանը:

Բանն այն է, որ աղմկահարույց կրակոցների շղթան սկսվել է Կոտայքի մարզից:

SHAMSHYAN.com-ը հայտնել էր, որ կայքի տեղեկություններով՝ հուլիսի 21-ին ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանի հրամաններով պաշտոնանկություններ են տեղի ունեցել ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Երեւանի եւ մարզային ոստիկանության բաժիններում: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, Ա. Սարգսյանի հրամաններով մի քանի ոստիկանապետեր ազատվել են աշխատանքից՝ ուղարկվելով կադրերի ռեզերվ, մի քանիսին էլ նախարարը ազատել է ոստիկանության ծառայությունից: Մի քանի ոստիկանապետերի առջեւ էլ պահանջ է դրվել, որ նրանք պետք է դիմում գրեն:

Այս պահին չենք հրապարակում այն ոստիկանապետերի անունները, որոնց պարտադրվել է գրել աշխատանքից ազատվելու սեփական դիմումը:

Ք. Մ.

ՀԱՂՈՐԴՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը վարչական վարույթ էր հարուցել 2026 թվականի հունիսի 14-ին ՀՀ Սյունիքի մարզի Կապան բնակավայրում տեղացած հորդառատ անձրեւների հետեւանքով Կապան քաղաքի Դավիթ Բեկ փողոցի համար 10 եւ 12 հասցեների հարակից լանջին գտնվող չշահագործվող հանքավայրի տարածքից դեղնանարնջագույն անձրեւաջրերի հոսքի դեպքով, հայտնում են տեսչական մարմնից:

«Վարչական վարույթի շրջանակում իրականացվել են տեղանքի ուսումնասիրություններ՝ աերոհետազոտության, ինչպես նաեւ հողի եւ անձրեւաջրի նմուշների լաբորատոր հետազոտություններ:

Հաշվի առնելով արձանագրված փաստական տվյալները եւ դրանցում հանցագործության առերեւույթ հատկանիշների առկայությունը՝ Տեսչական մարմինը վարչական վարույթի նյութերի հիման վրա առերեւույթ հանցանքի մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն»,-ասված է հաղորդագրության մեջ:

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑ

Արցախցի քաղաքական գործիչ Արթուր Օսիպյանը դատական հայց է ներկայացրել վարչապետ Նիկոլ Փաշինյանի դեմ: Այս մասին տեղեկանում ենք Արթոր Օսիպյանի ֆեյսբուքյան էջից:

«ՀՀ Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանն ընդունել է վարույթ իմ կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ պատասխանող Նիկոլ Փաշինյանի՝ զրպարտություն հանդիսացող տվյալները հերքելուն եւ ներողություն խնդրելուն պարտավորեցնելու պահանջների մասին»,-գրել է Օսիպյանը:

Օսիպյանը պահանջում է, որ դատարանը պարտավորեցնի վարչապետին հերքել զրպարտություն համարվող հայտարարությունները եւ ներողություն խնդրել:

Հիշեցնենք, որ Արթուր Օսիպյանը ձերբակալվել, այնուհետեւ կալանավորվել էր մայիսի 18-ին Արաբկիր վարչական շրջանում Փաշինյանիի հետ ունեցած միջադեպից հետո:

Նա հացադուլ էր հայտարարել՝ որպես բողոքի նշան Նիկոլ Փաշինյանի կողմից իր հասցեին հնչեցրած «փախած» որակման համար: Նրան մեղադրում են բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու, խուլիգանության եւ քարոզչությանը խոչընդոտելու մեջ:

Հունիսի 10-ին Օսիպյանին ազատ արձակելու որոշում է կայացվել:

ՓԼՈՒՋԵԼ Է

Հուլիսի 21-ին, արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 14:30-ի սահմաններում 66-ամյա Ռաֆիկ Դ.-ն իր վարած «KamAZ» մակնիշի աղբատար մեքենայով Նուբարաշենի աղբավայրից դեպի Նուբարաշենի խճուղի ընթանալիս դուրս է եկել երթեւեկելի գոտուց, բախվել Նուբարաշենի գերեզմանների քարե պարսպին եւ հայտնվել գերեզմաններում՝ մասամբ բախվելով շիրմաքարին: Ինչպես հայտնում է shamshyan.com-ը, վթարի հետեւանքով ըստ նախնական տեղեկությունների տուժածներ չկան: Վարորդը ենթարկվել է սթափության փորձաքննության, եղել է սթափ: Ըստ նախնական տեղեկությունների՝ պատճառը եղել է «KamAZ»-ի տեխնիկական խնդիրը՝ հիմնականում արգելակների հետ կապված:-Ֆոտոլրագրողը հայտնում է, որ ավտոմեքենան հաշվառված է Երեւանի քաղաքապետարանի «Երեւանի աղբահանություն եւ սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի հաշվեկշռում:

● Հուլիսի 13-ից 19-ը ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոնում գրանցվել է հրդեհի կեղծ կանչի 52 դեպք:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

10 ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԱԿՏԻՎ ԳՈՏԻՆԵՐ ԿԱՆ

Տավուշի մարզի բնակավայրերում հողի սողանքային երեւույթները միշտ էլ ակտիվ են եղել, որի հետեւանքով շատ առանձնատներ, բնակելի այլ շինություններ դարձել են վթարային: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հուլիսի 15-ին տեղեկատվական հարցում եմ արել. «Մայիսի 26-ին Տավուշի մարզպետի աշխատակազմում անցկացվել է շտաբային ուսումնավարժություն՝ «Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը սողանքի դեպքում» թեմայով: Տավուշի մարզում սողանքային քանի՞ ակտիվ գոտի կա, ո՞ր բնակավայրերում են դրանք, քանի՞ տուն է գտնվում այդ գոտիներում: Տավուշի մարզում վերջին անգամ ե՞րբ են սողանքից պաշտպանության գործնական աշխատանքներ կատարվել, որտե՞ղ, ե՞րբ են արվել դրանք»:

Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արման Գեւորգյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «Տավուշի մարզում կան 10 սողանքային ակտիվ գոտիներ, որոնք գտնվում են Իջեւան համայնքի Գետահովիտ /30 տուն/, Ծաղկավան /10-15 տուն/, Ակնաղբյուր /15 տուն/, Վազաշեն /4 տուն/, Աչաջուր /30 տուն/, Նոյեմբերյան համայնքի Լճկաձոր, Դիլիջան համայնքի Հաղարծին /3 տուն/, Գոշ, Հովք բնակավայրերում եւ Դիլիջան քաղաքի «Կենտրոնական» եւ «Մեծ Թալա» թաղամասերում: Սողանքային երեւույթները, բացի բնակելի տներից, վտանգ են ներկայացնում նաեւ ենթակառուցվածքների համար: Գետահովիտ բնակավայրում տեղադրված են սողանքային մարմնի տեղաշարժը չափող սարքեր: 2024 թվականին Հաղարծնի սողանքային գոտում գետի հունը ուղղելու եւ սողանքային երեւույթները կանխարգելելու նպատակով իրականացվել են հողազանգվածի հեռացման աշխատանքներ: 2025 թվականի մայիսին Դիլիջանի համայնքապետարանի ուժերով «Կենտրոնական» թաղամասում սողանքային երեւույթները կանխարգելելու նպատակով իրականացվել են ջրահեռացման համակարգերի մաքրման աշխատանքներ»: Մարզպետ Հ. Ղալումյանին մի քանի անգամ հարցում եմ արել մարզում 3-րդ, 4-րդ եւ 5-րդ կարգի վթարայնություն ունեցող տների թվի մասին: Մարզպետարանից պատասխանել են. «Ձեր տեղեկատվության պահանջին կրկին անգամ տեղեկացնում եմ, որ 3-րդ, 4-րդ, 5-րդ կարգի վթարայնություն ունեցող տների մասին տեղեկատվությունը անհրաժեշտ է 5-10 տարին մեկ թարմացման, այն իրականում մեծածավալ աշխատանք է եւ ներկայումս թարմացված տեղեկատվություն չունեք, համայնքների ղեկավարները ստացել են համապատասխան առաջարկություն՝ ցուցակները թարմացնելու վերաբերյալ մասնագիտական աշխատանք պատվիրելու համար, սակայն գործընթացը պահանջում է մեծ ֆինանսական ռեսուրսներ»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ի՞ՆՉ ՈՒՆԻ ՄԱՐԻԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ

ArmLur.am-ը ուսումնասիրել է, թե ինչ գույք եւ եկամուտներ է հայտարարագրել ՔՊ-ական պատգամավոր Մարիա Կարապետյանը տարբեր տարիներին, ինչպես նաեւ՝ ինչպես է փոխվել նրա ունեցվածքը:

Իսկ ինչ սկանդալներով է հայտնի ԱԺ պատգամավոր Մարիա Կարապետյանը

Բացի գույքային հայտարարագրերից, հանրային շրջանակներում եւ մամուլում պարբերաբար արծարծվում են պատգամավորի անվան շուրջ ծավալված մի շարք սկանդալներ, որոնք հիմնականում կապված են ադրբեջանական շրջանակների հետ նրա ունեցած կապերի հետ: Շրջանառվող լուրերի եւ հանրային խոսակցությունների համաձայն՝Մարիա Կարապետյանը հայտնի է նրանով, որ ունի ադրբեջանցի ընկեր, ինչպես նաեւ նշվում է, որ հաճախ հենց ինքն է դիմավորում եւ ուղեկցում Հայաստան ժամանող ադրբեջանցի պատգամավորներին:

«Դեժավյու» տելեգրամյան ալիքը նախկինում գրել էր, որ նախկին ՄԻՊ Արման Թաթոյանի դեմ հարձակումները եւ նրա կառույցի ֆինանսավորման կրճատումը նախաձեռնել էր անձամբ Մարիա Կարապետյանը՝ իր ադրբեջանցի ընկերների հորդորով, որոնք կապված են իշխող «Նոր Ադրբեջան» կուսակցության հետ: Ըստ աղբյուրի՝ նպատակ է եղել Թաթոյանին փոխարինել մեկով, ով գերիների եւ անհետ կորածների հարցը չի գերադասի հայ-ադրբեջանական մերձեցման օրակարգից:

Նույն ալիքը նաեւ հիշեցնում է, որ ժամանակին հենց Մարիա Կարապետյանն էր Ազգային ժողովի անցագիր տրամադրել տրանսգենդեր անձին, ով աղմկահարույց ելույթ ունեցավ խորհրդարանի ամբիոնից:

Ադրբեջանական կապերի մասին հրապարակումներով հանդես է եկել նաեւ «168 ժամ» պարբերականը՝ անդրադառնալով 2015 թվականին ադրբեջանական Նովրուզի տոնակատարությանը Կարապետյանի մասնակցությանը: Ըստ ադրբեջանցի Օրխան Նաբիեւի՝ յութուբում հրապարակած տեսանյութի, պատգամավորը պարել է խարույկի շուրջ եւ ասել. «Նովրուզի կապակցությամբ շնորհավորում եմ ձեզ բոլորիդ, թող բարի, առատ տարի լինի, գարնան սկիզբը լավը լինի, համբուրում եմ»: Լրատվամիջոցը նշում է, որ արեւմտյան կառույցներում, մասնավորապես «Rondine Cittadella della Pace» կազմակերպությունում վերապատրաստված եւ դրա տնօրենների խորհրդի կազմում ընդգրկված Կարապետյանը խաղաղություն է քարոզում Հայաստանում այն ֆոնին, երբ Ադրբեջանի ղեկավարությունը հավակնություններ է ներկայացնում հայկական տարածքների նկատմամբ՝ խոսելով նոր պատերազմի մասին:

Այս ամենին զուգահեռ, ըստ 2023 թվականի հուլիսին կայքերում տարածված տեղեկությունների, պատգամավորի մայրը՝ Աիդա Հայրապետյանը, սոցիալական հարթակներում սեռական բնույթի հայհոյանքներով է պատասխանել այն քաղաքացիներին, ովքեր քննադատել են իր դստերը՝ Արցախը Ադրբեջանի կազմում ճանաչելուն կողմ արտահայտվելու համար: Իսկ դեռեւս 2021 թվականին մի խումբ քաղաքացիներ բողոքի ակցիա էին իրականացրել Կարապետյանի բնակության վայրում՝ տարբեր տեղերում փակցնելով նրա լուսանկարը՝ «Այս թաղամասում բնակվում է ԱԺ պատգամավոր, դավաճան Մարիա Կարապետյանը» մակագրությամբ:

Ընդհանուր առմամբ, 2021-2025 թվականներին Մարիա Կարապետյանի գույքային պատկերը գրեթե չի փոխվել. սակայն եթե 2020 թվականին նրա ընդհանուր եկամուտը կազմել է 7 մլն 670 հազար դրամ, 2025 թվականին՝ արդեն 14 մլն 73 հազար դրամ:

Այսպիսով, պատգամավորի տարեկան եկամուտը հինգ տարվա ընթացքում աճել է մոտ 6.4 մլն դրամով՝ գրեթե 1.8 անգամ ավելանալով:

Հիշեցնենք, որ 2018 թվականի դեկտեմբերի 9-ին Մարիա Կարապետյանը Ազգային ժողովի պատգամավոր ընտրվեց «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի համապետական ընտրական ցուցակով: 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո նա կրկին պատգամավոր դարձավ արդեն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակով, իսկ 2026 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո եւս պահպանեց պատգամավորական մանդատը:

2020 թվական

2021 թվականի հայտարարագրի համաձայն Մարիա Կարապետյանը հայտարարագրել է մեկ անշարժ գույքը՝ Երեւանի Արաբկիր վարչական շրջանում գտնվող բնակարանը, որը ձեռք է բերել 2010 թվականի նոյեմբերի 17-ին՝ գնման եղանակով: Տարվա ընթացքում նա որեւէ անշարժ գույք չի ձեռք բերել եւ չի օտարել:

Իսկ տարեկան եկամուտը կազմել է ՝7 մլն 670 հազար դրամ ՝որը ստացել է ԱԺ-ից:

2021 թվական

2021 թվականի հայտարարագրի համաձայն՝ տարվա սկզբում եւ վերջում Մարիա Կարապետյանը հայտարարագրել է նույն անշարժ գույքը՝Երեւանի Արաբկիր վարչական շրջանում գտնվող բնակարանը, որը ձեռք է բերել 2010 թվականի նոյեմբերի 17-ին՝ գնման եղանակով: Տարվա ընթացքում նա որեւէ անշարժ գույք չի ձեռք բերել եւ չի օտարել:

Պատգամավորը չի հայտարարագրել տրանսպորտային միջոց, արժեթղթեր, բաժնեմասեր, ներդրումներ, բանկային ավանդներ, թանկարժեք գույք կամ հանձնված փոխառություններ:

Բանկային հաշիվներում տարվա սկզբին ունեցել է 28.63 ԱՄՆ դոլար, 30 հազար 862.2 դրամ, 618 հազար 819.7 դրամ, 11.62 եվրո եւ 44.55 լարի, իսկ տարեվերջին՝18.65 ԱՄՆ դոլար, 5406.2 դրամ, 417 հազար 377.8 դրամ, 10 եվրո եւ նույն 44.55 լարին: Կանխիկ դրամը կազմել է 30 հազար դրամ:

2021 թվականի ընդհանուր եկամուտը կազմել է 7 մլն 320 հազար 475.4 դրամ, որից 7 մլն 295 հազար 990 դրամը աշխատանքի վարձատրություն է Ազգային ժողովից, իսկ 45 եվրոն՝ «ԱԿԲԱ» բանկից ստացված վարկ: Տարվա վերջի դրությամբ ունեցել է նաեւ 45 եվրոյի վարկային պարտավորություն:

Նա «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է:

2022 թվական

2022 թվականին գույքային պատկերը չի փոխվել. պատգամավորը կրկին հայտարարագրել է նույն բնակարանը, չի ունեցել ավտոմեքենա, ավանդ, արժեթղթեր, ներդրումներ կամ թանկարժեք գույք:

Բանկային հաշիվներում ԱՄՆ դոլարով մնացորդն աճել է 18.65 դոլարից մինչեւ 42.25 դոլար, դրամային հաշիվներից մեկը նվազել է 5406.2 դրամից մինչեւ 764.3 դրամ, մյուսը՝417 հազար 377.8 դրամից մինչեւ 332 հազար 800.2 դրամ: Եվրոյով մնացորդը 10 եվրոյից դարձել է 10.01 եվրո, իսկ վրացական լարին մնացել է 44.55: Կանխիկ դրամը կրկին կազմել է 30 հազար դրամ:

Տարվա ընդհանուր եկամուտը կազմել է 7 մլն 874 հազար 840 դրամ, որն ամբողջությամբ աշխատանքի վարձատրություն է եղել Ազգային ժողովից: Վարկային պարտավորություններ տարվա վերջում չեն հայտարարագրվել:

2023 թվական

2023 թվականին եւս պատգամավորի միակ անշարժ գույքը մնացել է Արաբկիրի բնակարանը, իսկ մեքենա, արժեթղթեր, ներդրումներ, ավանդներ եւ թանկարժեք գույք չի հայտարարագրել: Բանկային հաշիվներում տարվա վերջում ունեցել է 1 մլն 272 հազար 534 դրամ, 80 հազար 678 դրամ, ինչպես նաեւ 44.55 լարի: Միաժամանակ դոլարային, եվրոյով եւ մեկ այլ դրամային հաշիվների մնացորդները զրոյացվել են: Կանխիկ դրամը մնացել է 30 հազար դրամ: 2023 թվականի եկամուտը կազմել է 10 մլն 1 հազար 343 դրամ, որն ամբողջությամբ աշխատանքի վարձատրություն է եղել Ազգային ժողովից:

2024 թվական

2024 թվականին Մարիա Կարապետյանի գույքային պատկերը կրկին չի փոխվել. պահպանվել է նույն բնակարանը, մեքենա, արժեթղթեր, ավանդներ կամ թանկարժեք գույք չեն հայտարարագրվել:

Տարվա սկզբին նրա հիմնական բանկային հաշվում եղել է 1 մլն 272 հազար 534 դրամ, սակայն տարեվերջին այդ հաշվի մնացորդը դարձել է 0 դրամ: Մյուս դրամային հաշիվը 80 հազար 678 դրամից նվազել է մինչեւ 5601 դրամ: Վրացական լարիով մնացորդը պահպանվել է՝ 44.55 լարի, իսկ կանխիկ դրամը՝30 հազար դրամ:

2024 թվականի ընդհանուր եկամուտը կազմել է 13 մլն 153 հազար 287 դրամ 90 լումա, որից 10 մլն 222 հազար 592 դրամը աշխատանքի վարձատրություն է, իսկ 2 մլն 930 հազար 695 դրամ 90 լուման՝«ԱյԴի բանկ»-ից ստացված վարկ: Նույնքան էլ կազմել է տարվա վերջի վարկի մայր գումարի մնացորդը:

Շահերի հայտարարագրում նա նշել է, որ «ԱՌՑԱՆՑ» երիտասարդական հասարակական կազմակերպության հիմնադիր է եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ:

2025 թվական

2025 թվականին նույնպես Մարիա Կարապետյանը հայտարարագրել է նույն բնակարանը, որը ձեռք է բերել 2010 թվականին: Նա չի ունեցել ավտոմեքենա, չի հայտարարագրել արժեթղթեր, ներդրումներ, ավանդներ կամ թանկարժեք գույք:

Բանկային հաշիվներից մեկում տարվա սկզբին եղել է 0 դրամ, իսկ տարեվերջին՝ 1 մլն 122 հազար 433 դրամ 36 լումա: Մյուս հաշվին մնացորդը 5601 դրամից աճել է մինչեւ 7334 դրամ 2 լումա: Վրացական լարիով մնացորդը պահպանվել է՝44.55 լարի, իսկ կանխիկ դրամը՝30 հազար դրամ:

2025 թվականի ընդհանուր եկամուտը կազմել է 14 մլն 73 հազար 591 դրամ 70 լումա, որից 12 մլն 855 հազար 525 դրամը աշխատանքի վարձատրություն է Ազգային ժողովից, իսկ 1 մլն 218 հազար 66 դրամ 70 լուման՝«ԱյԴի բանկ»-ից ստացված վարկ: Տարվա վերջի դրությամբ նույն չափով պահպանվել է նաեւ վարկի մայր գումարի մնացորդը:

Շահերի հայտարարագրի համաձայն՝ Մարիա Կարապետյանը շարունակում է հանդիսանալ «ԱՌՑԱՆՑ» երիտասարդական հասարակական կազմակերպության հիմնադիր եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ, սակայն առեւտրային կազմակերպություններում մասնակցություն կամ պաշտոն չի ունեցել:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

● *Հուլիսի 13-ից 19-ը ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոնում գրանցվել է ճանապարհատրանսպորտային պատահարի 73 դեպք:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

VISA STOP PAYMENT

Արհեստական բանականության, ժամանցային եւ մասնագիտական թվային ծառայությունների զարգացմանը զուգահեռ բաժանորդագրությունների քանակը զգալիորեն աճել է: Այսօր շատ օգտատերեր միաժամանակ օգտվում են մի քանի հարթակներից, որոնցից յուրաքանչյուրն ունի առանձին ամսական վճարում՝ բաժանորդագրության վճար:

Բաժանորդագրությունների «անտեսանելի» ծախսերը

Visa-ի 2025թ. հետազոտության համաձայն՝ Gen Z-ի 93%-ն ունի առնվազն մեկ բաժանորդագրություն, իսկ շատ օգտատերեր դժվարանում են վերահսկել պարբերական վճարումները՝ բախվելով անսպասելի գանձումների եւ բաժանորդագրությունների դադարեցման բարդ գործընթացների:

Այս երեւույթը հաճախ անվանում են subscription fatigue՝ բաժանորդագրություններից հոգնածություն, երբ բազմաթիվ փոքր վճարումները ժամանակի ընթացքում վերածվում են զգալի ծախսերի, իսկ ավտոմատ երկարաձգումները դառնում են լրացուցիչ անհարմարություն:

Լուծում Visa քարտապանների համար

Ավելորդ բաժանորդագրություններից հրաժարվելն ու ծախսերը վերահսկելը դարձել է ավելի հեշտ. Visa Stop Payment ծառայությունը Converse Mobile-ում հնարավորություն է տալիս մեկ հարթակից կառավարել Visa քարտով իրականացվող բաժանորդագրությունները:

Ծառայությունից օգտվելու համար Converse Mobile-ում ընտրեք՝

Քարտեր - Ընտրել Visa քարտը - Բաժանորդագրություններ

Բաժնում հնարավոր է՝

- տեսնել հասանելի բաժանորդագրությունները,
- դիտել դրանց հետ կապված գանձումները եւ գործարքները,
- ընտրել անհրաժեշտ ժամանակահատվածը,
- դադարեցնել այլեւս չօգտագործվող բաժանորդագրությունները:

«Դադարեցված բաժանորդագրություններ» բաժնում հնարավոր է տեսնել հավելվածի միջոցով ապաակտիվացված ծառայությունները եւ անհրաժեշտության դեպքում կրկին ակտիվացնել դրանք:

Ուշադրություն. Բանկը պատասխանատվություն չի կրում ցուցակում արտացոլված տվյալների ամբողջականության համար. հարթակում ներկայացվում են հասանելի տվյալները, որոնք կարող են լինել ոչ ամբողջական:

Մանրամասն՝ conversebank.am, 010 511 211

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

Հայտարարություն

Կորել է Կարեն Վլադիմիրի Սիմոնյանի՝ Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի Էներգետիկական ֆակուլտետի «Արդյունաբերական ձեռնարկությունների, քաղաքների եւ գյուղատնտեսության էլեկտրամատակարարում» մասնագիտությամբ 1985 թվականին տրված դիպլոմը: Դիպլոմ՝ ЛВ № 004079, գրանցման համարը՝ 57045:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է 42 ԴԵՊՔ

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՈՒ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

2026թ. երկրորդ եռամսյակի ընթացքում արձանագրվել է լրագրողների ու լրատվամիջոցների իրավունքների խախտումների 42 դեպք: Դրանցից 1-ը ֆիզիկական բռնություն է, 30-ը տարատեսակ այլ ճնշումներ, 11-ը՝ տեղեկություններ ստանալու եւ տարածելու իրավունքի խախտումներ են: Այս մասին հայտնում են Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեից:

«Վերոնշյալ 42 դեպքերի գրեթե 1/4-ը տեղի է ունեցել հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններին նախորդող քարոզարշավի եւ բուն քվեարկության օրվա ընթացքում: Մասնավորապես՝ մայիսի 8-ից հունիսի 7-ը Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն արձանագրել է լրագրողների ու ՁԼՄ-ների այլ աշխատակիցների օրինական մասնագիտական գործունեության խոչընդոտման 10 դեպք, որոնցից 1-ը՝ ֆիզիկական բռնության տեսքով, 6-ը վիրավորանքի կամ անհարգալից վերաբերմունքի, 3-ը՝ կիբերհարձակման:

Նույն նախընտրական ժամանակահատվածում ընդդեմ լրագրողների ու լրատվամիջոցների ներկայացվել է ընդհանուր երկրորդ եռամսյակում վարույթ ընդունված 11 նոր դատական հայցերից 5-ը, ընդ որում՝ վերջիններս առնչվում են քարոզարշավի թեմաներին:

Ուշագրավ է, որ այդ 5 հայցերից 1-ը իշխանության ներկայացուցչի կողմից է, 1-ը՝ բիզնես շրջանակից, 3-ը՝ ընդդիմադիր քաղաքական գործիչների կողմից: Ընդհանուր առմամբ եռամսյակի ընթացքում ներկայացված 11 նոր դատական հայցից 3-ը ընդդիմադիր քաղաքական գործիչների կողմից են, 3-ը՝ քաղաքացիների, 1-ը՝ բիզնես ոլորտի ներկայացուցչի, 1-ը՝ լրատվամիջոցի, 3-ը՝ պաշտոնյաների կողմից (ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի, պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի, արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի):

Երկրորդ եռամսյակում շարունակել են քննվել նաեւ լրատվամիջոցների ու լրագրողների կողմից ընդդեմ պաշտոնյաների ու պետական մարմինների՝ նախորդ ժամանակահատվածներում ներկայացված 10 դատական հայցերը: Մասնավորապես՝ դրանցում պատասխանող են հանդես գալիս Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, Արտգործնախարար Արարատ Միրզոյանը, վարչապետի տիկին Աննա Հակոբյանը, պատգամավորներ Արթուր Հովհաննիսյանը, Գեղամ Նազարյանը, ԱԺ աշխատակազմը (2 գործ), Հանրային հեռարձակողի խորհուրդը (2 գործ):

Դիտարկվող եռամսյակի առանձնահատկություններից է այն, որ ընտրություններով պայմանավորված իրավիճակը լրատվական դաշտում ծայրահեղ թեժացավ, եւ այդ ողջ շրջանում Հայաստանը բախվեց արտաքին (հիմնականում ռուսական) եւ ներքին տեղեկատվական մարտահրավերների, որոնցից առավել վտանգավորը հիբրիդային ներազդեցության արշավներն էին: Ըստ էության, դրսից իրականացվող ինֆորմացիոն ինտերվենցիան սատարում էր ստանում երկրի ներսում գործող լրատվական դաշտի մի ստվար մասի կողմից, որոնք ակնհայտորեն սպասարկում էին Կրեմլի շահերն ու նպատակները՝ ակտիվորեն տարածելով ապատեղեկությունները, ֆեյք լուրերը, մանիպուլյատիվ թեզերը թե՛ սեփական նյութերում, թե՛ ռուսամետ քաղաքական ուժերի քարոզը ներկայացնելիս: Նախընտրական այս պայքարում կիրառվել են արհեստական բանականությամբ ստեղծված կեղծ ինքնություններ, մոլորեցնող սոցիոլոգիական տվյալներ եւ հատուկ ծառայությունների «արտահոսքեր», որոնցով ողողվել է հայկական մեդիատիրույթը:

Լրատվական դաշտի ծայրահեղ բեւեռվածությունը, ՁԼՄ-ների ճնշող մեծամասնության սերտաճումը տարբեր քաղաքական ուժերի հետ եւ դրանց շահերը սպասարկելը բարենպաստ միջավայր է արտաքին տեղեկատվական ազդեցությունների համար, ինչը հստակ երեւաց այս ընտրությունների ժամանակ, եւ խնդիրը լուրջ մարտահրավեր է մնում նաեւ ապագայի համար: Սա մի իրավիճակ է, որում խախտվում է հանրության՝ ճշգրիտ տեղեկություններ ստանալու իրավունքը»,- նշված է կոմիտեի տարածած հաղորդագրության մեջ:

ՆՈՐ ՀԱՐԹԱԿ

Գ

Տեղեկացնում ենք, որ Հայէկոնոմբանկի Mastercard World քարտի ճամփորդական առավելություններից շարունակաբար օգտվելու համար 2026թ. հուլիսի 22-ից DragonPass-ի Mastercard Travel Experiences ծրագրի փոխարեն հարկավոր է մուտք գործել նոր՝ Mastercard Travel Pass հարթակը: Գործող օգտատերերի համար լրացուցիչ գրանցում չի պահանջվում. օգտահաշվի նույն տվյալներով հնարավոր է մուտք գործել MTP նոր հավելված կամ կայքէջ: Բոլոր ամրագրումները պահպանվելու եւ տեղափոխվելու են նոր հարթակ:

Թվային նոր հարթակը հնարավորություն է տալիս ամրագրել Fast Track ծառայություն աշխարհի 119 օդանավակայաններում, ինչպես նաեւ տրանսֆեր դեպի օդանավակայան եւ հակառակ ուղղությամբ: Հիշեցնենք, որ Հայէկոնոմբանկի Mastercard World քարտը տրամադրում է.

տարեկան 6 անվճար մուտքի հնարավորություն օդանավակայանների բիզնես սրահներ,

Fast Track ծառայությունից օգտվելու 6 անվճար հնարավորություն,

անվճար ինտերնետ (1 GB + 15% զեղչ) եւ այլն:



Իսկ AEB ճամփորդական փաթեթի շրջանակում կարող եք,

օգտվել վիզայի աջակցության 50% զեղչից inLobby տուրիստական ընկերությունում,

Հայէկոնոմբանկում ձեռքբերել Սիլ ինշուրանսի ճանապարհորդության ապահովագրության պայմանագիր 4,000 դրամ արժեքով,

ստանալ բանկային տեղեկանքներ 50% զեղչված արժեքով եւ ավելին:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է

3-ՐԴ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ հուլիսի 22-24-ը Մատենադարանում կանցկացվի 3-րդ Հայագիտական միջազգային կոնգրեսը՝ նվիրված Մխիթարյան միաբանության հիմնադիր, նշանավոր հոգեւորական, գիտնական Մխիթար Սեբաստացու ծննդյան 350-ամյակին: Կոնգրեսին մասնակցում են աշխարհի 16 երկրների առաջատար համալսարանների եւ գիտական հաստատությունների հայագետներ:

Բացմանը ներկա են եղել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը, Մատենադարանի տնօրեն Արա Խզմալյանը, ՀՀ-ում Իտալիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ալեսանդրո Ֆերրանտին: Միջոցառման հանդիսավոր մեկնարկը տրվել է Վաչե Շարաֆյանի հեղինակած «Հայաստան» երգով, որը կատարել է «Հովեր» պետական կամերային երգչախումբը: Երգը, որն այսուհետեւ կուղեկցի Մատենադարանի պաշտոնական արարողությունները, կառույցին է ընծայաբերվել 3-րդ Հայագիտական միջազգային կոնգրեսի շրջանակում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը ողջույնի խոսքում կարեւորել է հայագիտության կարեւոր խնդիրների շուրջ քննարկումներն ու ինստիտուցիոնալ աշխատանքները, որոնցից է նաեւ Հայագիտական միջազգային կոնգրեսի կազմակերպումը:

Հիշեցնելով, որ Վենետիկի Մխիթարյան միաբանությունում հոգեւոր ժառանգության պահպանման հարցերը բարձրացվել էին առաջին կոնգրեսի ժամանակ, որից հետո ձեռագրական կենտրոնների խնդիրները գույքագրվել են, քննարկվել են լուծումները՝նախարարը շեշտել է, որ կոնգրեսը հայագիտության զարգացման գործուն հարթակ է դարձել:

«Երեք տարվա փորձառությունը բավարար հիմք է՝ խոսելու հայագիտության ոլորտում ավելի ինստիտուցիոնալ մոտեցումների ամրագրման եւ հետեւողական աշխատանքի իրականացման մասին:

Նախորդ տարի ընդունվեց «Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» նոր օրենքը, որի կարեւորագույն ուղղություններից մեկը հայագիտության զարգացման խթանումն է: Այս տարվա հունվարին, հաստատված գիտության ոլորտի զարգացման ռազմավարությամբ, հայագիտությունը նույնպես շեշտադրված է որպես Կառավարության համար առաջնահերթ դիտարկվող ոլորտ: Հայագիտությունը մեզ համար ունի նաեւ էմոցիոնալ եւ պատմական բովանդակություն, սակայն մենք այս հարթակում պետք է կարեւորենք գիտական մոտեցումները՝ հայագիտության զարգացման հիմքում դնելով միջազգային ամենաբարձր չափանիշներով գիտական հետազոտությունների իրականացումը»,- ասել է նախարարը՝ վստահություն հայտնելով, որ կոնգրեսի մասնակիցները բարձր պատասխանատվությամբ եւ հանձնառությամբ են մոտենում ոլորտի զարգացմանը:

Նրա նշմամբ՝ կոնգրեսում արձանագրված խնդիրները պետք շարունակություն ունենան բուհերում, հասնեն լսարաններ՝ դառնալով ուսումնասիրության նյութ երիտասարդ հետազոտողների համար: Այս գործընթացը, ըստ նախարարի, պետք է տեղի ունենա նաեւ Հայաստանից դուրս գործող հայագիտական կենտրոններում՝ բոլորին համախմբելով միասնական նպատակի շուրջ, որին պետությունը հանձնառու է աջակցել:

Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի մասնագիտական թիմին՝ Հայագիտական միջազգային կոնգրեսի կազմակերպման համար, ինչպես նաեւ ԵՄ պատվիրակությանը եւ Իտալիայի դեսպանությանը, հայկական հոգեւոր ձեռագրական կենտրոնների ներկայացուցիչներին՝ աջակցության եւ մասնակցության համար:

«Հայագիտական համայնքը ընդլայնվում եւ զարգանում է, որը եւս կոնգրեսի ձեռքբերումներից է: Ուրախ եմ, որ հայագիտության առաջմղման գործում միասին ենք»,- ասել է Ժաննա Անդրեասյանը:

Մատենադարանի տնօրեն Արա Խզմալյանն առանձնակի շեշտել է այն հանգամանքը, որ 3-րդ հայագիտական միջազգային կոնգրեսը նվիրված է Մխիթար Սեբաստացու 350-ամյակին, որը մեծ մտածողի թողած ժառանգությունը վերարժեւորելու հավելյալ առիթ է. «Հոբելյանն իր ճշմարիտ իմաստով անցյալի հիշատակության եւ մեծարման առիթ չէ միայն, այլ՝ յուրատեսակ ինքնաքննություն. արդյոք կարողացե՞լ ենք մեր գրավոր գանձարանին հաղորդել գիտական լիարժեք իմաստավորում, դարձնել համաշխարհային ակադեմիական շրջանառության բաղկացուցիչ, լայնորեն հասանելի մարդկությանը եւ ապահովել նրա պահպանության ու վերականգնման այնպիսի մակարդակ, որն արժանի է այդ բացառիկ ժառանգությանը: Մեր խորին համոզմամբ մենք պարտք ենք մեր մեծագործ նախնիներին: Կարծում եմ, որ այս հոբելյանն առիթ է եւս մեկ անգամ կարեւորելու հայերեն ձեռագրական հավաքածուների պահպանման ու հանրահռչակման ռազմավարության մշակման, դրա շուրջ պետական օղակների, մասնավոր հատվածի, հոգեւոր հայրերի ու գիտնականների համախմբվածության ու միասնական հանձնառության հրամայականը»:

Մատենադարանի տնօրենը երախտագիտությամբ ընդգծել է, որ ԿԳՄՍ նախարարությունը Մատենադարանին է վստահել հայագիտական Կոնգրեսի համակարգման պետական առաքելությունը եւ աջակցել այս կարեւոր ծրագրին հատուկ կարգավիճակ տալու հարցում:

Հայագիտական միջազգային կոնգրեսի շրջանակում Մատենադարանի գիտական մասնաշենքում բացվել է Մխիթար Սեբաստացու ծննդյան 350-ամյակին նվիրված հատուկ ցուցադրություն: Մատենադարանի թանգարանում նախատեսվում է նաեւ «1 տարվա հավերժությունը. Մատենադարանի ձեռագրական համալրումները» խորագրով ցուցադրությունը: Կանցկացվի նաեւ գրքատոն, որի ընթացքում կներկայացվեն հայագիտական նոր հրատարակությունները եւ Մատենադարանի հրատարակչական նորույթները:

Հայ նշանավոր հոգեւորական, գիտնական, բանաստեղծ, կոմպոզիտոր եւ Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացու 350-ամյակն ընդգրկված է Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության 2026 թվականի հոբելյանական ծրագրերի ցանկում:

ՀՌՉԱԿՎԵԼ ԵՆ ՉԵՄՊԻՈՆՆԵՐ

Էստոնիայի մայրաքաղաք Տալինում մեկնարկած հրաձգության աշխարհի առաջնությունում Հայաստանի հավաքականը պատմական ու աննախադեպ արդյունքներ է գրանցել մրցումային առաջին իսկ օրը: Մեր հրաձիգները փայլուն ելույթների շնորհիվ նվաճել են երկուական ոսկե եւ արծաթե մեդալներ, հայտնում է armsport-ը: Տղամարդկանց «շարժվող թիրախ, խառը վազք» մրցաձեւի անհատական պայքարում գերազանց արդյունք է գրանցել Հայկ Մինասյանը: Խոցելով 384 միավոր՝ հայ մարզիկը հռչակվել է աշխարհի չեմպիոն: Հատկանշական է, որ սա հայկական հրաձգության պատմության մեջ առաջին ոսկե մեդալն է մեծահասակների աշխարհի առաջնություններում: Նույն մրցաձեւի թիմային պայքարում Հայկ Մինասյան, Հովհաննես Մարգարյան եւ Գոռ Խաչատրյան եռյակը գրավել է երկրորդ տեղը՝ արժանանալով արծաթե մեդալների:

Մեր ընտրանու պատմական հաջողությունը կրկնապատկել է Աիդա Ազատյանը: Երիտասարդ աղջիկների պայքարում հայ հրաձիգը 379 միավորով նվաճել է աշխարհի չեմպիոնի կոչումը: Թիմային մրցարշարում էլ Ազատյանը՝ Անահիտ Սարգսյանի ու Լիլիթ Մկրտչյանի հետ միասին, ընդհանուր 1095 միավորով զբաղեցրել է պատվավոր երկրորդ հորիզոնականն ու դարձել աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿՀԻՇԻ ԱՅԴ ԽՈՍՔԵՐԸ

Իսպանիայի ազգային հավաքականի եւ «Բարսելոնայի» հարձակվող Լամին Յամալը խոսել է աշխարհի 2026 թվականի առաջնության եզրափակիչում Արգենտինայի նկատմամբ տարած հաղթանակի (1-0՝ լրացուցիչ ժամանակում) մասին, ինչպես նաեւ բացահայտել է հարավամերիկացիների ավագ Լիոնել Մեսսիի հետ զրույցի մանրամասները՝ եզրափակիչ սուլիչից անմիջապես հետո, հայտնում է armsport-ը:

«Պարզապես անհավանական է: Եթե մի քանի տարի առաջ ինձ ասեիք, որ 19 տարեկանում ես կբարձրացնեմ աշխարհի գավաթը Լիոնել Մեսսիի դեմ եզրափակիչից հետո, ես կասեի, որ դուք խելագարվել եք: Հիմա ես ամբողջ ուժով փորձում եմ զսպել արցունքներս, որովհետեւ սա այն պահն է, որի մասին երազել եմ ողջ կյանքում: Սա հաղթանակ է իմ ընտանիքի, Ռոկաֆոնդայի (Յամալի հայրենի թաղամասը - խմբ.) եւ Իսպանիայի յուրաքանչյուր քաղաքացու համար, որոնք աջակցում էին մեզ եւ օգնում հաղթահարել այս մրցաշարի յուրաքանչյուր դժվար րոպեն: Սա սյուրռեալիստական սցենար է, լավագույն իրադարձությունն աշխարհում: Ես միշտ հիացել եմ Մեսսիով: Եզրափակիչ սուլիչը հնչելուն պես՝առաջին բանը, որ ցանկանում էի անել, իմ վերաբերմունքն ու մեծ հարգանքը նրան ցույց տալն էր: Լեոն սեղմեց ձեռքս եւ ասաց, որ ես պետք է շարունակեմ նույն ոգով, քանի որ ապագան պատկանում է մեր սերնդին: Այս խոսքերը ես կհիշեմ ողջ կարիերայիս ընթացքում: Այդ խոսքերը ինձ համար նույնքան արժեքավոր են, որքան պարանոցիս կախված ոսկե մեդալը»,- հետխաղյա մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է Լամին Յամալը:

Հիշեցնենք, որ Իսպանիայի հավաքականը պատմության մեջ երկրորդ անգամ դարձավ աշխարհի չեմպիոն:

ԵՐԲԵՔ ՉԻ ՆՎԱՃԻ

Ֆրանսիայի ազգային հավաքականի նախկին ֆուտբոլիստ Ֆրանկ Լեբյոֆը հայտարարել է, որ «եռագույնների» հարձակվող Կիլիան Մբապեն չի արժանանա «Ոսկե գնդակին», քանի դեռ չի սկսել խաղալ հանուն թիմի: «Ես «Ոսկե գնդակի» մեծ երկրպագու չեմ: Ինձ դուր չեն գալիս անհատական մրցանակները թիմային մարզաձեւերում: Բայց Կիլիան Մբապեն բացառիկ ֆուտբոլիստ է՝ հսկայական տաղանդով եւ անհավանական ինքնավստահությամբ: Եթե նա չսկսի աշխատել թիմի համար, երբեք չի նվաճի «Ոսկե գնդակը», քանի որ նրա թիմը երբեք ոչինչ չի հաղթի: Հենց սրանում է կայանում խնդիրը Չեմպիոնների լիգայի եւ աշխարհի առաջնությունների մակարդակում: «Լիվերպուլը» եւ ՊՍԺ-ն հաղթում են Չեմպիոնների լիգան թիմային խաղի շնորհիվ, երբ յուրաքանչյուրը նվիրվում է մյուսի համար: Հնարավոր է՝ նա փոխել է իր վերաբերմունքը, գուցե «Ռեալում» դա աշխատի: Եթե նա ցանկանում է նվաճել «Ոսկե գնդակը», պետք է օգնի իր թիմակիցներին»,- armsport-ի փոխանցմամբ՝Լեբյոֆի խոսքերն է մեջբերում Freebets-ը:

Հիշեցնենք, որ ավարտված ակումբային մրցաշրջանում Մբապեն բոլոր մրցաշարերում մասնակցել է ընդհանուր առմամբ 44 հանդիպման՝ դառնալով 42 գոլի եւ 7 արդյունավետ փոխանցման հեղինակ:

● *Խամաճիկների պետական թատրոնում հուլիսի 25-ին՝ ժամը 12:30-ին, կկայանա «Հենզելն ու Գրետելը» տիկնիկային ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ, թե ինչպես է իրականացվում իրավունքների փոխանցումը եւ օգտագործման թույլտվությունը:

Վալյա Գասպարյան, 48 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները հեղինակի կողմից կարող են ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխանցվել (զիջվել) երրորդ անձանց կամ նրանց տրամադրվել օգտագործման թույլտվություն (լիցենզիա)՝ հեղինակի եւ նրանց միջեւ կնքված համապատասխանաբար՝ զիջման կամ լիցենզային (այսուհետ նաեւ՝ հեղինակային) պայմանագրի հիման վրա, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Հեղինակային պայմանագիրը կնքվում է գրավոր ձեւով, որն էլ հանդիսանում է կողմերի երաշխիքը, քանի որ տվյալ պայմանագրով կարգավորվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները, որոնք վերաբերում են ստեղծագործության օգտագործմանը:

Պայմանագրի կողմը, որի իրավունքներն ու օրինական շահերը խախտվել են կարող է դատարանի միջոցով պահանջել իր իրավունքների հարկադիր իրականացում:

Մտավոր սեփականության գրասենյակ

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է Վերգետնյա թվային հեռուստատեսությունը:

Մնդրանիկ Օհանյան, 54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Վերգետնյա թվային հեռուստատեսությունը (ՎԹՀ) հեռուստատեսային նոր տեխնոլոգիա է, որը եկել է փոխարինելու գործող անալոգայինին: Այն թույլ է տալիս հեռարձակել այնպիսի ձեւաչափի տեսաձայնային նյութեր, որը լայնորեն կիրառվում է համակարգչային եւ համացանցային տեխնոլոգիաներում: Հայաստանում ՎԹՀ տեսաձայնային ձեւաչափը հանրահայտ MPEG-4 ձեւաչափն է: ՎԹՀ տեխնոլոգիան հնարավորություն է ընձեռում բազմաթիվ հեռուստատեսային եւ ռադիո ծրագրեր, տարաբնույթ տեքստային, պատկերային եւ ձայնային տեղեկատվական նյութեր հեռարձակել հեռուստատեսային մի կապուղիով (channel - կապուղի, կանալ): ՎԹՀ հեռուստահաղորդումները կարող են ունենալ այլընտրանքային կառուցվածք (լեզվական, լուսագրերի կամ պատկերների տարբերակներ)՝ հեռուստադիտողի նախասիրությանը թողնելով հաղորդման դիտման ձեւը (ինտերակտիվություն): ՎԹՀ տեխնոլոգիայի նորամուծությունն է նաեւ Ծրագրերի էլեկտրոնային ուղեցույցը (EPG):

Մեր երկրում ՎԹՀ հեռարձակման ստանդարտը եվրոպական DVB T2-ն է:

Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Արտակարգ դեպք Երեւանում. «Hongqi»-ն Պարոնյան-Զորափնյա փողոցների հատման վայրում հայտնվել է ջրագիծ անցկացնելու համար փորված փոսում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 11 + 16 + 24 + 29
Կոտայքի լեռներ	+ 11 + 15 + 24 + 28
Կոտայքի նախալեռներ	+ 18 + 20 + 30 + 33
Գեղարքունիք	+ 9 + 14 + 21 + 26
Լոռի	+ 10 + 15 + 26 + 29
Տավուշ	+ 11 + 15 + 26 + 29
Արագածոտնի լեռներ	+ 10 + 14 + 23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+ 17 + 22 + 30 + 35

Արարատ	+ 19 + 22 + 32 + 36
Արմավիր	+ 19 + 22 + 32 + 36
Վայոց ձորի լեռներ	+ 10 + 14 + 25 + 28
Վայոց ձորի նախալեռներ	+ 19 + 22 + 34 + 38
Սյունիքի լեռներ	+ 10 + 14 + 20 + 24
Սյունիքի նախալեռներ	+ 13 + 16 + 26 + 30
Սյունիքի հովիտներ	+ 17 + 21 + 33 + 36
Երեւան	+ 21 + 23 + 34 + 36

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.07.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*